

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2012 թվականի

Թիվ 60

քաղ. Մոսկվա

**Մաքսային միության անդամ պետությունների լիազորված մարմինների միջև
հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի հաշվեգրման,
բաշխման եւ վերադարձման հետ կապված տեղեկատվության փոխանակման
կարգի մասին հիմնադրույթի վերաբերյալ**

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից **որոշեց**.

1. Հաստատել «Մաքսային միության անդամ պետությունների լիազորված մարմինների միջև հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի հաշվեգրման, բաշխման եւ վերադարձման հետ կապված տեղեկատվության փոխանակման կարգի մասին» հիմնադրույթը (կցվում է):

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից երեսուն օր հետո:

Նախագահ

Վ. Բ. Խրիստենկո

Հաստատված է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի
մայիսի 16-ի թիվ 60 որոշմամբ

Հիմնադրույթ

**Մաքսային միության անդամ պետությունների լիազորված մարմինների միջև
հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի հաշվեգրման,
բաշխման, փոխանցման եւ վերադարձման հետ կապված տեղեկատվության
փոխանակման կարգի մասին**

1. Սույն Հիմնադրույթը մշակվել է «Երրորդ երկրների նկատմամբ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման հատուկ միջոցների կիրառման մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի (2011 թվականի հոկտեմբերի 18-ի արձանագրության խմբագրությամբ, այսուհետ՝ Համաձայնագիր) 28.1 հոդվածի 11-րդ կետի համաձայն, եւ սահմանում է Մաքսային միության անդամ պետությունների (այսուհետ՝ Կողմեր) լիազորված մարմինների միջև Համաձայնագրի 28.1 հոդվածի եւ «Անցումային ժամանակահատվածի ընթացքում հատուկ պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման կարգի մասին» 2010 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագրի 14-րդ հոդվածի հիման վրա գանձվող հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի հաշվեգրման, բաշխման, փոխանցման եւ վերադարձման հետ կապված տեղեկատվության փոխանակման ձեւը, ժամկետները եւ կարգը:

2. Սույն Հիմնադրույթում գործածվող եզրույթները կիրառվում են Մաքսային միության Մաքսային օրենսգրքով եւ «Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի (այլ տուրքերի, հարկերի եւ համարժեք գանձումների) հաշվեգրման եւ բաշխման կարգը սահմանելու եւ կիրառելու մասին» 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրով սահմանված իմաստներով:

3. Ամեն օր՝ տեղական ժամանակով (Բելառուսի Հանրապետության համար՝ ք. Մինսկի ժամանակով, Ղազախստանի Հանրապետության համար՝ ք. Աստանայի ժամանակով, Ռուսաստանի Դաշնության համար՝ ք. Մոսկվայի ժամանակով) ընթացիկ օրվա ժամը 16:00-ից ոչ ուշ, Կողմի լիազորված մարմինը մյուս Կողմերի լիազորված մարմիններին ուղարկում է հաշվեգրված, բաշխված, փոխանցված, վերադարձված հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի գումարների մասին հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ հաշվետու օրվա համար եւ օրացուցային տարվա սկզբից աճող հանրագումարով՝ սույն Հիմնադրույթի հավելվածին համապատասխան ձեւով: Հաշվետվությունը ներառում է տեղեկատվություն՝

Կողմի լիազորված մարմնի միասնական հաշվին հաշվեգրված հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի գումարների մասին.

հաշվետու օրվա ընթացքում Կողմի լիազորված մարմնի կողմից հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի վճարման հաշվին կատարված հաշվանցման գումարների մասին.

հաշվետու օրվա ընթացքում վերադարձված հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի գումարների եւ առանձին՝ ընթացիկ օրվա ընթացքում վերադարձման ենթակա հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի գումարների մասին.

Կողմերի ազգային (կենտրոնական) բանկերի կողմից՝ հաշվետու օրվա ընթացքում կատարման չընդունված հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի վերադարձման գումարների մասին.

Կողմերի միջեւ բաշխման ենթակա հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի գումարների մասին.

բաշխված հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի գումարների մասին, որոնք մուտքագրվել են այլ Կողմերի արտարժույթային հաշիվներին.

տվյալ Կողմի լիազորված մարմնի միասնական հաշվից տվյալ Կողմի բյուջե

մուտքագրված հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի բաշխումից ստացված եկամուտների գումարների մասին.

լիազորված մարմնի արտարժույթային հաշվին մուտքագրված հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի բաշխումից ստացված եկամուտներից տվյալ Կողմի բյուջե մուտքագրված գումարների մասին.

բաշխված հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի գումարների մասին, որոնց փոխանցումն այլ Կողմերի արտարժույթային հաշիվներին կասեցվել է.

սույն Հիմնադրույթի 1-ին կետում նշված համաձայնագրերի կատարումը խախտելու դեպքում այլ Կողմերի կողմից կետանցի համար տոկոսների՝ հոգուտ Կողմի մուտքագրված գումարների մասին:

4. Ամեն ամիս՝ հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը, Կողմի լիազորված մարմինը այլ Կողմերի լիազորված մարմիններին, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին, ուղարկում է հաշվետու ամսվա վերջին հաշվետու օրվա դրությամբ իրավիճակի վերաբերյալ հաշվետվություն:

5. Կողմերի լիազորված մարմինները, ստացված տեղեկատվությանը համապատասխան, իրականացնում են տվյալների օպերատիվ ստուգում: Անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում կազմվում է արձանագրություն, եւ Կողմերը ձեռնարկում են միջոցներ՝ դրանք կարգավորելու համար:

6. Կողմի լիազորված մարմնի կողմից այլ Կողմերի լիազորված մարմիններին եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին ուղարկված հաշվետվությունը, սույն Հիմնադրույթին համապատասխան, ստորագրվում է տվյալ լիազորված մարմնի ղեկավարի կամ այլ լիազորված անձի կողմից եւ ուղարկվում է էլեկտրոնային կապի միջոցներով՝ էլեկտրոնային գրաֆիկական պատճենների ձեւով:

Հավելված

Մաքսային միության անդամ պետությունների
լիազորված մարմինների միջև հատուկ,
հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի
հաշվեգրման, բաշխման, փոխանցման եւ
վերադարձման հետ կապված տեղեկատվության
փոխանակման կարգի մասին հիմնադրույթի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Կողմի լիազորված մարմնի անվանումը)

«___» _____ 20 __ թ-ի դրությամբ հաշվեգրված, բաշխված,
փոխանցված եւ վերադարձված հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման
տուրքերի գումարների մասին

Թիվ h/h	Ցուցանիշի անվանումը	Գումարը	
		օրում	տարվա սկզբից
1	2	3	4
	I բաժին	(Կողմի ազգային արժույթով)	
1	Հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքեր՝ հաշվեգրված լիազորված մարմնի հաշվին		
2	Հաշվանցված հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի վճարման հաշվին		
3	Վերադարձված հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքեր		
4	Ընթացիկ օրվա ընթացքում վերադարձման ենթակա հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքեր		
5	Ազգային (կենտրոնական) բանկի կողմից վերադարձնելու համար կատարման չընդունված հատուկ, հակազնազցման եւ փոխհատուցման տուրքերի գումարը		
6	Ենթակա է Կողմերի միջև բաշխման, ընդամենը		
	այդ թվում բյուջեներ՝	X	X
6.1	Ղազախստանի Հանրապետության		
6.2	Բելառուսի Հանրապետության		

6.3	Ռուսաստանի Դաշնության		
7	Փոխանցված է այլ Կողմերի արտարժութային հաշիվներին՝	X	X
7.1	Այլ Կողմի անվանումը		
7.2	Այլ Կողմի անվանումը		
8	Հաշվեգրված է Կողմի պետական բյուջեում, ընդամենը		
8.1	Հատուկ, հակազնագցման եւ փոխհատուցման տուրքերի բաշխումից ստացված եկամուտներ՝ փոխանցված Կողմի լիազորված մարմնի հաշվից		
8.2	Փոխանցումը կասեցված հատուկ, հակազնագցման եւ փոխհատուցման տուրքերի գումարը, ընդամենը		
	այդ թվում՝	X	X
8.2.1	_____ում (Այլ Կողմի անվանումը)		
8.2.2	_____ում (Այլ Կողմի անվանումը)		
	II բաժին	(այլ Կողմերի ազգային արժույթով)	
9	Այլ Կողմերի կողմից հաշվեգրված է Կողմի արտարժութային հաշիվներին	X	X
9.1	(Այլ Կողմի անվանումը) -ից (այլ Կողմի ազգային արժույթը), ընդամենը		
	այդ թվում՝	X	X
9.1.1	Հատուկ, հակազնագցման եւ փոխհատուցման տուրքերի բաշխումից մուտքագրված եկամուտներ		
9.1.2	Կետանցի համար մուտքագրված տոկոսների գումարը		
9.2	(Այլ Կողմի անվանումը) -ից (այլ Կողմի ազգային արժույթը), ընդամենը		
	այդ թվում՝	X	X
9.2.1	Հատուկ, հակազնագցման եւ փոխհատուցման տուրքերի բաշխումից մուտքագրված եկամուտներ		
9.2.2	Կետանցի համար մուտքագրված տոկոսների գումարը		

Նախորդ հաշվետվության ամսաթիվը « _____ » _____ 20__ թ.

Լիազորված մարմնի ղեկավար _____
 (լիազորված անձ) (ստորագրություն) (Ա. Ա. Հ.)

Լիազորված մարմնի _____
 պատասխանատու կատարող (ստորագրություն) (Ա. Ա. Հ.) (հեռախոսահամար)